ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՕՐԳՈՎԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

07 Դեկտեմբերի 2012 թվական N11-Ա

ԳԵՈՐԳ ԵՎ ԱԼՎԱՐԴ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆԵՐԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Հիմք ընդունելով ըստ կտակի ժառանգության իրավունքի 16.07.2007թ. 4861 վկայագրի, ժառանգորդներ ճանաչված Գեորգի և Ալվարդ Արամայիսի Հարությունյանների դիմումը,ժառանգություն ստացած 017-019 ծածկագրով հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը օրինականացնելու մասին, ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. N-912-Ն որոշման 2-րդ բաժնի պահանջներով՝նկատի ունենալով այն հանգամանքը, որ ժառանգություն ստացած տնամերձ հողամասում մինչև 2001թ-ը կառուցված------քմ մակերեսով բնակելի տունը բավարարում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պայմանները կառույցի պահպանումը չի խաղտում այլ անձանց իրավունքները օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, այդ կառույցը չի կառուցված ինժիներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով ու չի առաջացնում սերվիտուտ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Գեորգի և Ալվարդ Արամայիսի Հարությունյանների ժառանգություն ստացած 017-019 ծածկագրով տնամեձ հողամասում մինև 2001թ-ը ինքնակամ կառուցված----քմ բնակելի տունը ճանաչել օրինական առանց օրինականացման համար սահմանված վճարները գանձելու:

Համայնքի ղեկավար՝ Ա. Մանուկյան

2012թ. Դեկտեմբերի 07.
Գ. Օրգով

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶ Ի ՕՐԳՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» «դեկտեմբեր» 2012թ. N 12-Ա.

Վարդուշ Միսակի Մնացականյանի իրավահաջորդ Սիմոն Գրիգորի Մնացականյանի կողմից իրեն հատկացված հողամասից ավել օգտագործվող հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու մասին:

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի և ՀՀ կառավարության 12.1998թ. թիվ 867 որոշման պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Վարդուշ Միսակի Մնացականյանի իրավահաջորդ Սիմոն Գրիգորի Մնացականյանի կողմից իրեն հատկացված հողամասից քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային օգտագործմանը, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբեկտների օտարման, ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ճանաչել Վարդուշ Միսակի Մնացականյանի իրավահաջորդ Սիմոն Գրիգորի Մնացականյանի սեփականության իրավունքը Օրգով համայնքում 009-011, 009-017, 010-007 ծածկագրերով 0.0585հա, 0.3178հա և 0.0935հա փաստացի 0.4698հա տնամերձ հողամասի նկատմամբ նրանց հատկացված 0.38հա հողամասից ավել օգտագործվող մինչև 20% 0.076հա հողամասը անհատույց հատկացնելու, իսկ 20%-ից ավել 0.0138հա հողամասը տվյալ պահին գործող կադաստրային արժեքի 30%-ով /1քմ 372.6դր./ ընդամենը 51419դր արժեքով օտարելու պայմանով:

Օրգով գյուղապետարանի՝ *Մանուկյան*